ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 փետրվարի 2014 թվականի N 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ-ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2014թ. փետրվարի 11-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում լրացումներ կատարելուն համաձայնություն տալու մասին>> N 91-Ա որոշումը, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին–մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-3.1-15) անձնագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Վ. ՀԱԿՈԲՅԱՆ*

2014. փետրվարի 13
ք. Կապան